ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ԵՐԵՎԱՆ 2017

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն փաստաթղթի կազմման հիմք է ծառայել ՀՀ կրթության և գիտության նախարարի 07 նոյեմբերի 2017թ. թիվ 1282-Ն հրամանով հաստատված “Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը” [ՕՓ 1]: Կարգը տարածվում է ուսուցման բոլոր ձևերով բակալավրական և մագիստրոսական կրթություն ստացող շրջանավարտների վրա:
2. Ամփոփիչ ատեստավորման նպատակն է՝
   - պարզել շրջանավարտի գիտելիքների համապատասխանությունը ՀՀ կրթության Որակավորումների ազգային շրջանակի և դրա ընդհանրական բնութագրերի պահանջներին,
   - բացահայտել շրջանավարտի տեսական և գործնական պատրաստականությունը պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:
3. ՀԱՊՀ-ում ամփոփիչ ատեստավորման ձևերն են՝ բակալավրական աստիճանի համար՝ ավարտական աշխատանքը, իսկ մագիստրոսական աստիճանի համար՝ մագիստրոսական թեզը [ՕՓ 1]:

2. ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. ***Ավարտական աշխատանքը*** մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան ավարտուն տեխնիկական-տեխնոլոգիական կամ տնտեսագիտական նախագիծ կամ մշակում է, որն ամփոփում է մասնագիտական ոլորտում ուսանողի ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները:

Մագիստրոսական թեզն ավարտուն տեխնիկական-տեխնոլոգիական կամ տնտեսագիտական նախագիծ կամ մշակում է՝ նվիրված գիտության և տեխնիկայի տվյալ մասնագիտական ոլորտին առնչվող արդիական հիմնախնդիրների լուծմանը, ինչը բխում է ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և կարողությունների պահանջներից:

5. Ավարտական աշխատանքը/մագիստրոսական թեզը պարտադիր կարգով պետք է ներառեն մասնագիտական տվյալ ոլորտին առնչվող հիմնահարցերը՝ հաշվի առնելով կրթական ծրագրերի և ընտրովի դասընթացների բովանդակությունն ըստ կրթաբլոկների: Ավարտական աշխատանքը, բացի մասնագիտական բաժնից, պետք է ընդգրկի նաև տնտեսագիտության, բնապահպանության և կենսագործունեության անվտանգության բաժիններ, իսկ տնտեսագիտական մասնագիտությունների դեպքում՝ տեխնոլոգիական բաժին՝ տնտեսագիտության բաժնի փոխարեն [ՕՓ2]: Բնապահպանական բնույթի մասնագիտությունների համար ավարտական աշխատանքում բնապահպանության բաժին չի պահանջվում: Մագիստրոսական թեզը ներառում է միայն

մասնագիտական բաժին, իսկ տնտեսագիտական մասնագիտությունների դեպքում՝ պարտադիր նաև տեխնոլոգիական բաժին:

6. Ավարտական աշխատանքը բաղկացած է հաշվեբացատրագրից և հաշվեգրաֆիկական մասից, իսկ մագիստրոսական թեզը՝ հաշվեբացատրագրից: Դրանք պետք է բավարարեն հետևյալ պահանջներին (բացառությամբ տնտեսագիտական կրթական ծրագրերի, որոնք պետք է բավարարեն «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի կատարման ուղեցույցի պահանջներին [ՕՓ 2]).

6.1. Բակալավրի կրթական աստիճանի դեպքում.

- հաշվեբացատագրի ծավալը պետք է լինի ոչ պակաս, քան 55 համակարգչային տպագիր էջ, որից տնտեսագիտության բաժինը՝ 8-9 էջ, բնապահպանության և կենսասագործունեության անվտանգության բաժիններից յուրաքանչյուրը՝ 4-5 էջ:

6.1.1. Հաշվեբացատրագիրը պետք է ներառի.

- տիտղոսաթերթ (տե՛ս Հավելված 1),
- առաջադրանք (լրացվում և տրվում է ամբիոնի/սեկտորի կողմից, տե՛ս Հավելված 2),
- համառոտագիր,
- բովանդակություն,
- ներածություն (պետք է ներառի թեմայի արդիականութան հիմնավորումը, աշխատանքի հիմնական նպատակը, ընդհանուր բնութագիրը և ստացված արդյունքները),
- մասնագիտական նյութեր՝ ըստ գլուխների և ենթագլուխների (ներառվում են առաջադրված խնդրի լուծման տեխ-

նիկական-տեխնոլոգիական, տնտեսագիտական կամ ծրագրային ապահովման տեսական հիմնավորումը, տեխնոլոգիական ռեժիմների, գործընթացների հաշվարկը և հիմնավորումը, ինչպես նաև, թեմայի առանձնահատկությամբ պայմանավորված, կարող են ընդգրկվել փորձարարական և այլ բնույթի հարցեր),

- տնտեսագիտական բաժին,
- կենսասագործունեության անվտանգության բաժին,
- բնապահպանության բաժին,
- եզրակացություններ,
- օգտագործված գրականության ցանկ՝ տեքստում դրանց պարտադիր հղումներով,
- հավելվածներ (անհրաժեշտության դեպքում):

6.1.2. Հաշվեգրաֆիկական մասը պետք է պատկերի ավարտական աշխատանքի արդյունքը՝ պահպանելով բոլոր ստանդարտները: Այն պետք է ընդգրկի հավաքական գծագրեր կամ՝ պատրաստվածքների ընդհանուր տեսքի կամ դրանց հավաքական միավորների ու դետալների գծագրերը, սկզբունքային էլեկտրական կամ միացման սխեմաները և այլ անհրաժեշտ պատկերազարդումներ: Անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացվել նաև աշխատանքի բովանդակությունը լրացնող-պարզաբանող դիագրամներ, գրաֆիկներ, տեխնոլոգիական սարքավորումների գծագրեր կամ պատկերներ, ինչպես նաև փորձնական տվյալներ: Անհրաժեշտ է կազմել նյութերի, դրանց դետալների, սխեմաների տարրերի մասնագրերը: Գրաֆիկական նյութը յուրաքանչյուր թերթի վրա պետք է զետեղվի այնպես, որ բաշխվի հավասարաչափ և զբաղեցնի թերթի ծավալի 70-80 %-ը:

Հաշվեգրաֆիկական մասը մեքենաշինական, տրանսպորտային, մեխանիկամեքենագիտական, ընդերքաբանության, մետալուրգիական, նյութագիտության, քիմիական, շինարարական, էներգետիկական և էլեկտրատեխնիկական մասնագիտությունների դեպքում պետք է լինի Ա1 ձևաչափի 6 թերթից ոչ պակաս, իսկ մնացած մասնագիտությունների, այդ թվում՝ նաև տնտեսագիտական և բնապահպանական մասնագիտությունների դեպքում՝ Ա1 ձևաչափի 5 թերթից ոչ պակաս. վերջիններս կարող են ներկայացվել ինչպես պլակատների, այնպես էլ լուսապատկերների (սլայդների) տեսքով: Լուսապատկերներով ներկայացնելու դեպքում էլեկտրոնային կրիչի առկայությունը պարտադիր է, իսկ լուսապատկերները, պլակատներին ներկայացվող պահանջներով, Ա4 ձևաչափով ձևակերպված, կցվում են ավարտական աշխատանքի հաշվեբացատրագրին որպես հավելված: Պլակատների կամ լուսապատկերների թիվը չի սահմանափակվում՝ պայմանավորված աշխատանքի առանձնահատկություններով:

6.2. Մագիստրոսական կրթական ծրագրի դեպքում.

- մագիստրոսական թեզի ծավալը պետք է լինի ոչ պակաս, քան 60 համակարգչային տպագիր էջ: Պաշտպանության ժամանակ թեզը կարող է ներկայացվել ինչպես պլակատների, այնպես էլ լուսապատկերների տեսքով: Լուսապատկերներով ներկայացնելու դեպքում էլեկտրոնային կրիչի առկայությունը պարտադիր է, իսկ լուսապատկերները, պլակատներին ներկայացվող պահանջներով, Ա4 ձևաչափով ձևակերպված, կցվում են մագիստրոսական թեզի հաշվեբացատագրին որպես հավելված: Պլակատների կամ

լուսապատկերների թիվը չի սահմանափակվում՝ պայմանավորված աշխատանքի առանձնահատկություններով:

6.2.1. Մագիստրոսական թեզը պետք է ներառի (տե՛ս Հավելված 3).

- տիտղոսաթերթ,
- հաստատման թերթ,
- տվյալներ շրջանավարտի մասին,
- առաջադրանք,
- համառոտագիր,
- բովանդակություն,
- ներածություն (ներառվում են աշխատանքի ընդհանուր բնութագիրը, թեմայի արդիականության հիմնավորումը, աշխատանքի հիմնական նպատակը, տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը, հետազոտության մեթոդի հիմնավորումը, ստացված արդյունքները),
- աշխատանքի բովանդակությունը կազմող մասնագիտական նյութեր՝ ըստ առանձին գլուխների և ենթագլուխների (ներառվում են գիտատեխնիկական գրականության վերլուծության ակնարկը, մոդելի, ալգորիթմի, տեխնոլոգիայի, մեթոդիկայի, կառուցվածքի մշակումը՝ պայմանավորված լուծվող կամ հետազոտվող խնդրի առանձնահատկություններով, ինչպես նաև, ըստ աշխատանքի առանձնահատկության, փորձարարական մաս՝ մոդելի, ալգորիթմի, մեթոդի, տեխնոլոգիայի, կառուցվածքային սխեմայի փորձարկումը, ստացված փորձնական տվյալների մշակումը),
- ընդհանուր եզրակացություններ ու առաջարկություններ,
- օգտագործված գրականության ցանկ՝ տեքստում դրանց պարտադիր հղումներով,
- հավելվածներ (անհրաժեշտության դեպքում):

6.3. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի ձևակերպման ընդհանուր պահանջները.

Տեքստը հավաքվում է Sylfaen կամ GHEA Grapalat տառատեսակով, Ա4 ձևաչափի սպիտակ թղթի մեկ երեսին՝ 12 տառաչափով, 1,5 քայլքով: Էջերը պետք է ունենան լուսանցքներ՝ ձախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ: Ավարտական աշխատանքի/ մագիստրոսական թեզի բաժինները սկսվում են նոր էջից՝ վերնագրերը գրելով մեծատառերով: Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի բոլոր էջերը, ներառյալ հավելված(ներ)ը, էջադրվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ և չի էջադրվում: Մեծ ծավալով հավելվածն էջադրվում է առանձին:

Նկարները, գծապատկերները համարակալվում են, որոնց անվանումները, նշանակումների բացատրությունները տրվում են անմիջականորեն դրանց ներքևում: Աղյուսակները համարակալվում են վերևի աջ անկյունում արաբական թվերով, որի տակ գրվում է աղյուսակի անվանումը: Դրանք կարելի է տեղադրել ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքով: Եթե աղյուսակը չի տեղավորվում մեկ թերթի վրա, ապա պետք է շարունակել մյուս թերթի վրա՝ նշելով՝ Աղ. ….-ի շարունակությունը: Աղյուսակներում ազատ սյունյակներ չպետք է մնան. նման դեպքերում դրվում է գծիկ:

Գրականության ցանկը կարելի է ներկայացնել այբբենական կամ խառը հաջորդականությամբ՝ երկու դեպքում էլ տեքստում հղումների համարները նշելով ըստ ցանկի հերթականության: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների ազգանունը և անվան-հայրանվան սկզբնատառերը, աղբյուրի լրիվ անվանումը, հատորը կամ մասը,

եթե գիրք է, համարը, եթե պարբերական է, հրատարակության տվյալները (քաղաքը, հրատարակչությունը, տարեթիվը, էջերը): Պաշտոնական տեղեկագրերի, հաշվետվությունների, հրահանգների, էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պատենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները: Աղբյուրները ներկայացվում են բնօրինակի լեզվով: Օգտագործված գրականության ցանկում զգալի թիվ պետք է կազմեն նորագույն աղբյուրները:

Ավարտական աշխատանքը/մագիստրոսական թեզը գրվում են գրական հայերենով՝ պահպանելով գիտական գրավոր խոսքի կառուցմանը ներկայացվող կանոնավորության և մաքրության պահանջները: Աշխատանքում պետք է օգտագործվեն միայն ընդունված տերմինները: Չափման միավորների՝ ստանդարտներին չհամապատասխանող կրճատումներ չեն թույլատրվում: Տեքստում կամ աղյուսակներում հապավումներն առաջին անգամ գործածելիս պետք է փակագծերում բացվեն լրիվ, իսկ պայմանական նշանները՝ բացատրվեն:

Անհրաժեշտության դեպքում՝ հապավումների, համառոտագրումների և պայմանական նշանների ցանկերը կարող են ներկայացվել հավելվածի տեսքով:

3. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

7. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովները կազմվում են 6 անդամներից, որոնց առնվազն 50 %-ը, այդ թվում՝ նախագահը, պետք է լինեն տվյալ կամ հարակից ոլորտների (բնագավառների) գործատու կամ գործընկեր կազմակերպություններից, ակադեմիական և հարակից մասնագիտական բուհական հաստատություններից հրավիրված մասնագետներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահին, մասնաճյուղի/ինստիտուտի/ֆակուլտետի ղեկավարի ներկայացմամբ, նշանակում է ՀԱՊՀ ռեկտորը՝ համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերատեսչությունների, ակադեմիական, բուհական հաստատությունների գիտական աստիճան և/կամ կոչում ունեցող մասնագետներից, ովքեր տվյալ հաստատության աշխատողներ չեն և նախորդող երեք տարիներին չեն եղել ամփոփիչ ատեստավորման տվյալ հանձնաժողովի նախագահ: Մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովի անդամները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան:
8. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում ի պաշտոնե ընդգրկվում են համապատասխան ինստիտուտի/ֆակուլտետի ղեկավարը կամ նրա տեղակալը (մասնաճյուղի դեպքում՝ մասնաճյուղի տնօրենը/տեղակալը կամ ֆակուլտետի ղեկավարը/տեղակալը), մասնագիտական ամբիոնի վարիչը, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչը:

9. Հանձնաժողովների կազմերը, ներառյալ քարտուղարը, հրամանագրվում են ՀԱՊՀ ռեկտորի կողմից: Հանձնաժողովները գործում են մինչև համապատասխան մասնագիտությամբ/կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման համար ռեկտորի հրամանով հաստատված նոր հանձնաժողովի ձևավորումը:
10. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում ՀԱՊՀ ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող՝ հանձնաժողովի կազմից:
11. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրվում են քարտուղարի կողմից, ով ինստիտուտի/ֆակուլտետի աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ:

4. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

12. Ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի թեմաները, ամբիոնների ներկայացմամբ, հաստատվում են մասնաճյուղի, ինստիտուտի գիտական խորհրդի կամ ֆակուլտետի խորհրդի կողմից և հրամանագրվում՝ ֆակուլտետների դեպքում՝ համակարգող պրոռեկտորի հրամանով, իսկ ինստիտուտների և մասնաճյուղերի դեպքում՝ տնօրենի հրամանով հետևյալ ժամկետներում.
12.1. Բակալավրատի առկա ուսուցման ավարտական կուրսի համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 15-ը, հեռակա ուսուցման ավարտական կուրսի համար՝ մինչև հոկտեմբերի 31-ը,
12.2. Մագիստրատուրայի առկա ուսուցման առաջին կուրսի համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմ-

բերի 30-ը, հեռակա ուսուցման առաջին կուրսի համար՝ մինչև տվյալ ուսումնական տարվա հունվարի 31-ը:

13. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի ղեկավարման համար մասնագիտական ամբիոնի կողմից ներկայացվում և սահմանված կարգով ֆակուլտետների դեպքում՝ պրոռեկտորի հրամանով, իսկ ինստիտուտների և մասնաճյուղերի դեպքում՝ տնօրենի հրամանով նշանակվում են ղեկավար և խորհրդատուներ՝ նրանց ներկայացվող պահանջների պարտադիր պահպանմամբ: Մագիստրոսական թեզի ղեկավարի գիտական աստիճանի առկայությունը, որպես կանոն, պարտադիր է:
14. Համաձայն տվյալ տարվա ուսումնական գործընթացի ժամանակացույցի՝ հանձնաժողովը, շրջանավարտի և ղեկավարի մասնակցությամբ կամ վերջինիս գրավոր եզրակացության հիման վրա, իրականացնում է կատարողականի ստուգում, որի արդյունքում, համաձայն “Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ-ընթացակարգ”-ի, ձևավորվում է ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի կատարման համաչափության բաղադրիչի ռեյթինգային միավորը [ՕՓ 3]:
15. Ավարտական աշխատանքը/մագիստրոսական թեզը, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, ներկայացվում է գրախոսման, ընդ որում՝ ավարտական աշխատանքի դեպքում՝ ներքին կամ արտաքին, իսկ մագիստրոսական թեզի դեպքում՝ արտաքին գրախոսների կողմից: Որպես արտաքին գրախոսներ ընդգրկվում են արտադրության, նախագծա-կոնստրուկտորական, գիտական հիմնարկների և այլ կազմակերպությունների համապատասխան մասնագետները,

որոնց կազմը, ամբիոնի վարիչի ներկայացմամբ, հաստատվում է ամբիոնի նիստում: Մագիստրոսական թեզի գրախոսման դեպքում գրախոսի գիտական աստիճանի առկայությունը, որպես կանոն, պարտադիր է:

16. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների աշխատանքի ժամանակացույցը համաձայնեցվում է յուրաքանչյուր հանձնաժողովի նախագահի հետ և մասնաճյուղի/ինստիտուտի/ ֆակուլտետի ղեկավարի ներկայացմամբ միասնական հրամանով հաստատվում է համալսարանի ռեկտորի կողմից: Ժամանակացույցը ավարտական աշխատանքների/ մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ տեղեկացվում է շրջանավարտներին:

17. Ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի պաշտպանություններն անցկացվում են հանձնաժողովների բաց նիստերում՝ դրանց կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Նախագահի կամ նրան փոխարինողի ներկայությունը պարտադիր է: Ավարտական աշխատանքների/մագիստրոսական թեզերի պաշտպանությունները կարող են տեղի ունենալ ինչպես բուհում, այնպես էլ տվյալ մասնագիտական ոլորտին առնչվող հիմնարկներում և կազմակերպություններում:

18. Ամփոփիչ ատեստավորման թույլատրվում են այն ուսանողները, ովքեր կատարել են ուսումնական պլանով նախատեսված բոլոր բաղադրիչները, հանձնել քննություններն ու ստուգարքները և կուտակել համապատասխան կրեդիտներ: Ամփոփիչ ատեստավորման ենթակա շրջանավարտների ցանկը հաստատվում է՝ ֆակուլտետի դեպքում՝ համակարգող պրոռեկտորի, իսկ ինստիտուտի/մասնաճյուղի դեպքում՝ տնօրենի հրամանով:

19. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի բռվանդակությունը ներկայացնելու համար յուրաքանչյուր ուսանողին տրվում է մինչև 15 րոպե, հարց ու պատասխանի համար՝ մինչև 20 րոպե ժամանակ: Հանձնաժողովի նիստի տևողությունը չպետք է գերազանցի աշխատանքային օրվա 8 ժամը: Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգային պահանջներին համաձայն՝ ամփոփիչ ատեստավորման ընթացքն արձանագրվում և ձայնագրվում է: Ձայնագրությունը պահպանվում է արդյունքների հրապարակումից հետո 6 ամիս:
20. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են “գերազանց”, “լավ”, “բավարար”, “անբավարար” գնահատականներով՝ ՀԱՊՀ–ում ընդունված գնահատման 100 միավորանոց սանդղակով, և հայտարարվում նույն օրը՝ հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո մեկ ժամվա ընթացքում [ՕՓ 3]:
21. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության դրական արդյունքի հիման վրա, որը ձևակերպված է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի արձանագրությամբ, ընդունվում է որոշում՝ շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) հանձնելու մասին: Բացասական (“անբավարար”) արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթությունը հավաստող դիպլոմ չի հանձնվում:
22. Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը “գերազանց” գնահատականներով հանձնած այն

շրջանավարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90%-ը (ՄՈԳ ≥ 90 միավոր):

23. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության արդյունքի վերաբերյալ որոշումն ընդունվում է հանձնաժողովի փակ նիստում: Շրջանավարտի գնահատականի մասին որոշումն ընդունվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով, որն ամբողջացվում է սահմանված կարգով [ՕՓ 3]:

24. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանության հանձնաժողովների բոլոր որոշումները քարտուղարի կողմից արձանագրվում են արձանագրությունների հատուկ մատյանում՝ յուրաքանչյուր շրջանավարտի համար առանձին էջում: Արձանագրությունները պարտադիր ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած անդամների կողմից: Արձանագրությունները պահվում են համալսարանում: Արձանագրության մեջ նշվում են ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի գնահատականը, ինչպես նաև տրված հարցերը, հատուկ կարծիքները և այլն: Արձանագրության մեջ նշվում են շնորհված որակավորումը, աստիճանը և հաստատությունն ավարտողի դիպլոմի տեսակը (սովորական կամ գերազանցությամբ):

25. Ամփոփիչ ատեստավորման գնահատականի բողոքարկման դեպքում այն իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգի 26-րդ կետի [ՕՓ 1]:

25.1. Շրջանավարտն իրավունք ունի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովից պահանջելու լրացուցիչ մեկնաբանություններ իր գնահատականի վերաբերյալ՝ արդյունքները հայտարարելուց անմիջապես հետո:

25.2. Գնահատականի վերաբերյալ շրջանավարտի գրավոր բողոքն ընդունվում և դիտարկվում է միայն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից ընթացակարգային խախտումների առկայության դեպքում:

25.3. Գնահատականի լրացուցիչ քննարկման և բողոքարկման կարգը սահմանում է համալսարանը [ՕՓ 4]:

26. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությունից “անբավարար” գնահատական ստացած շրջանավարտին, իր ցանկությամբ, անվճար տրվում է սահմանված ձևի ակադեմիական տեղեկանք՝ դիմումը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

27. Ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ “անբավարար” գնահատված շրջանավարտը թույլատրվում է նոր պաշտպանության՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ ՀԱՊՀ-ում սահմանած կարգով և ժամկետներում: Հարգելի պատճառով ամփոփիչ ատեստավորմանը չներկայացած ուսանողը, մինչև պաշտպանության օրը բացակայության մասին գրավոր տեղեկացման և համապատասխան փաստաթղթերի ներկայացման պարագաներում, թույլատրվում է պաշտպանության տվյալ ուսումնական տարում՝ համալսարանի կողմից սահմանված ժամկետում:

Անհարգելի պատճառով չներկայացած կամ “անբավարար” գնահատված շրջանավարտը,իր դիմումի համաձայն և հա-

մապատասխան վճարման դեպքում, ուսումնական տարվա սկզբին՝ մինչև սեպտեմբերի 30-ը, կցագրվում է համապատասխան մասնագիտական խմբին (համապատասխան մասնագիտությամբ ակադեմիական խմբի բացակայության դեպքում՝ մասնագիտական ամբիոնին) և ստանում ավարտական աշխատանքի/մագիստրոսական թեզի նոր թեմա՝ սահմանված կարգով այն կատարելու և պաշտպանության ներկայացնելու համար:

28. Համալսարանի մասնաճյուղի ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է սույն ընթացակարգի համաձայն՝ տվյալ մասնաճյուղում:

29. ՀԱՊՀ-ի կողմից արտոնված ձևերով և ժամկետներում արտասահմանում մասնակի ուսումնառություն անցած շրջանավարտների ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի պաշտպանությունը կարող է իրականացվել մասնաճյուղի/ ինստիտուտի/ֆակուլտետի ղեկավարի կողմից ներկայացված և ՀԱՊՀ ռեկտորի կողմից հաստատված առանձին ժամկետներում՝ սույն ընթացակարգային պահանջներին համապատասխան:

30. ՀԱՊՀ և այլ հաստատությունների կողմից իրականացվող համատեղ կրթական ծրագրերի շրջանավարտների համար կարող է կազմակերպվել համատեղ ամփոփիչ ատեստավորում՝ հաստատությունների միջև նախապես փոխհամաձայնեցված և համապատասխան պայմանագրով հաստատագրված ընթացակարգերով՝ հիմք ընդունելով սույն ընթացակարգի համապատասխան դրույթները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ (ՕՓ)

1. Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ:
2. Տնտեսագիտություն մասնագիտությամբ դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ուղեցույց:
3. Ուսանողների գիտելիքների հսկման և գնահատման ռեյթինգային համակարգի կանոնակարգ-ընթացակարգ:
4. Ուսանողների գիտելիքների գնահատման բողոքարկման ընթացակարգ:

Հավելված 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

_____

ԻՆՍՏԻՏՈՒՏ/ՖԱԿՈՒԼՏԵՏ

_____ ԱՄԲԻՈՆ

Մասնագիտություն _____

Մասնագիտացում _____

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՇՎԵԲԱՑԱՏՐԱԳԻՐ

ԹԵՄԱՆ՝_____

_____

_____

_____ ակադ. խմբի ուսանող _____

(Ա.Հ.Ա., ստորագրություն, ամսաթիվ)

Աշխատանքի ղեկավար՝_____

(Ա.Հ.Ա., գիտական աստիճան, տարակարգ, ստորագրություն, ամսաթիվ)

Խորհրդատուներ.

Տնտեսագիտական բաժնի՝_____

(Ա.Հ.Ա., գիտական աստիճան, տարակարգ, ստորագրություն, ամսաթիվ)

Կենսագ. անվտանգ. բաժնի՝ _____

(Ա.Հ.Ա., գիտական աստիճան, տարակարգ, ստորագրություն, ամսաթիվ)

Բնապահպանության բաժնի՝ _____

(Ա.Հ.Ա., գիտական աստիճան, տարակարգ, ստորագրություն, ամսաթիվ)

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության _____

(ամսաթիվ)

Ամբիոնի վարիչ՝ _____

(Ա.Հ.Ա., գիտական աստիճան, տարակարգ, ստորագրություն, ամսաթիվ)

Ինստիտուտի տնօրեն՝ _____

Ֆակուլտետի դեկան (Ա.Հ.Ա., գիտական աստիճան, տարակարգ, ստորագրություն, ամսաթիվ)

ԵՐԵՎԱՆ - 201

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

_____ ԻՆՍՏԻՏՈՒՏ/ՖԱԿՈՒԼՏԵՏ

_____ ԱՄԲԻՈՆ

Մասնագիտություն _____ դասիչ _____
(գրել առանց հապավումների)

Մասնագիտացում _____
(գրել առանց հապավումների)

Թիվ _____ ակադեմիական խմբի

_____ (ուսանողի
ազգանուն, անուն, հայրանուն)

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Աշխատանքի թեման _____

_____

_____

Առաջադրանքը հաստատված է ՀԱՊՀ 201 թ.-ի _____<___> թիվ _____ հրամանով:

Ինստիտուտի տնօրեն՝ _____
Ֆակուլտետի դեկան (Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

Ամբիոնի վարիչ՝ _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

2. Աշխատանքի նախնական տվյալները _____

_____

_____

_____

3. Հաշվեբացատրագրի բովանդակությունը (բաժինների և մշակման ենթակա հարցերի թվարկմամբ)

_____

_____

_____

4. Գրաֆիկական մասի ծավալը (պարտադիր գծագրերի թվարկմամբ)

_____

_____

_____

5. Աշխատանքի կատարման օրացուցային պլան

թիվ	Աշխատանքի կատարման փուլերը			Ծանոթություն
	Անվանումը	կատ. ժամկ.	հաշվ. ձևը	
	I ատեստավորում			
	II ատեստավորում			
	III ատեստավորում			
	Նախնական պաշտպանություն			

6. Աշխատանքի պաշտպանության օրը _____

7. Ամբիոնի վարիչ _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

8. Աշխատանքի ղեկավար _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

9. Աշխատանքի բաժինների խորհրդատուներ

9.1. Տնտեսագիտական _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

9.2. Կենսագործնեության անվտանգության _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

9.3. Բնապահպանության _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

10. Աշխատանքի առաջադրանքը ստացա _____
(Ուսանողի ստորագրություն, ամսաթիվ)

Հավելված 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

ԹԵՄԱ՝ _____

_____

ՄԱԳԻՍՏՐԱՆՏ_____

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ_____

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ_____

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆ _____մագիստրոսի

ԵՐԵՎԱՆ 201

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹԵՐԹ

ԹԵՄԱ՝ _____

Թեզի ղեկավար՝ _____
ԱԱՀ, գիտ.աստիճան, կոչում

Մագիստրանտ՝ _____

Գրախոս՝ _____
ԱԱՀ, գիտ.աստիճան, կոչում

Ամբիոնի վարիչ՝ _____
ԱԱՀ, գիտ.աստիճան, կոչում

Ինստիտուտի տնօրեն/Ֆակուլտետի դեկան՝ _____
ԱԱՀ, գիտ.աստիճան, կոչում

ՏՎՅԱԼՆԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՄԱՍԻՆ

Մագիստրանտ՝ _____

Մասնագիտություն՝ _____

Կրթական ծրագիր՝ _____

Ծննդյան տարեթիվը՝ _____

Մինչ մագիստրոսական որակավորումը՝ _____ բակալավր

Մասնագիտությունը՝ _____

Կրթական ծրագիրը՝ _____

Հրատարակված աշխատանքներ՝ _____

_____

_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

_____ ԻՆՍՏԻՏՈՒՏ/ՖԱԿՈՒԼՏԵՏ
(Ինստիտուտի/ֆակուլտետի անվանումը)

_____ ԱՄԲԻՈՆ
(ամբիոնի անվանումը)

Մասնագիտություն_____դասիչ _____
(գրել առանց հապավումների)

Կրթական ծրագիր _____
(գրել առանց հապավումներ)

Թիվ_____ ակադեմիական խմբի
(խմբի համարը)

_____
(ուսանողի ազգանուն / անուն / հայրանուն)

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

1. Թեման _____

Հաստատված է ՀԱՊՀ 20 թ.-ի _____ «_____» թիվ _____ հրամանով:

2. Նախնական տվյալներ_____
_____
_____

3. Հաշվեբացատրագրի բովանդակություն (բաժինների և մշակման ենթակա հարցերի թվարկմամբ)
_____
_____
_____
_____
_____
_____

5. Թեզի կատարման օրացուցային պլան

Հ/Հ	Թեզի կատարման փուլերը			Ծանոթություն
	Անվանումը	Կատ. ժամկ.	հաշ. ձևը	
1.				
2.				
3.				
	I ատեստավորում		20 %	
4.				
5.				
6.				
	II ատեստավորում		60 %	
7.				
8.				
9.				
10.				
	III ատեստավորում		100%	
11.	Աշխատանքի ներկայացումը ամբիոն		Ավ. աշխ.	
12.	Նախնական պաշտպանություն			

6. Աշխատանքի պաշտպանության օրը _____

7. Ամբիոնի վարիչ _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

8. Աշխատանքի ղեկավար _____
(Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)

9. Աշխատանքի առաջադրանքը ստացա _____
(ուսանողի Ա.Ա.Հ., ստորագրություն, ամսաթիվ)